ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Հետաքրքրության արտահայտման
հրավեր խորհրդատվական ծառայությունների մատուցման համար

Երկիր՝	***Հայաստանի Հանրապետություն***
Ծրագիր՝	***Համայնքների Գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ (ՀԳՌԿՄ 2-րդ) ծրագիր***
Ծրագրի համարը՝	***P133705***
Վարկի/Փոխառության համարը՝	***Վարկ No.8374-AM***
Նշանակման անվանումը՝	***ՀՀ 23 համայնքների/բնակավայրերի տարածքներում կենդանիների հավաքատեղիների կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ***
Հղման համարը՝	***CARMAC2-CW-21-11/03/1 ըստ Գնումների պլանի/***

1. Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային Բանկից ստացել է ֆինանսավորում Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ (ՀԳՌԿՄ2) ծրագրի ծախսերի համար և նախատեսում է այդ միջոցների մի մասն օգտագործել ՀՀ 23 համայնքների/բնակավայրերի տարածքներում կենդանիների հավաքատեղիների կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության իրականացման խորհրդատվական ծառայությունների համար:

2. Խորհրդատուն պետք է իրականացնի հետևյալ համայնքների/բնակավայրերի տարածքներում կենդանիների հավաքատեղիների կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողությունը՝

ա/ ՀՀ Արագածոտնի մարզ՝ Նոր Ամանոս, Քուչակ և Ն. Բազմաբերդ
բ/ ՀՀ Կոտայքի մարզ՝ Լեռնանիստ, Բջնի, Գեղաշեն
գ/ ՀՀ Գեղարքունիքի մարզ՝ Խաչաղբյուր, Վարդենիկ, Լճաշեն, Վահան, Կարմիրջուր և Ն.Գետաշեն
դ/ ՀՀ Շիրակի մարզ՝ Թավշուտ, Մեծ Սեպասար, Բավրա, Հարթաշեն, Ամասիա և Արեգնադեմ
ե/ ՀՀ Լոռու մարզ՝ Մարգահովիտ, Ջրաշեն և Մեծավան
զ/ ՀՀ Տավուշի մարզի Վ. Ծախկավան և Կոթի:

4. Աշխատանքները նախատեսվում է իրականացնել 2022թ. մարտ-ապրիլ ամիսներին:

5. ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու) հրավիրում է այդ բնագավառում համապատասխան որակավորմում և փորձ ունեցող խորհրդատվական կազմակերպություններին ցուցաբերել իրենց հետաքրքրվածությունը նշված ծառայություններն իրականացնելու համար:

6. Խորհրդատվական կազմակերպության որակավորման չափանիշներն են՝

- Շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ մատուցելու առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ,
- Առաջադրանքի ոլորտում համապատասխան տեխնիկական հսկողության ծառայությունների առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ:

7. Հետաքրքրված խորհուրդատուները պետք է ներկայացնեն հետաքրքրվածության նամակ և տեղեկություններ՝ (կազմակերպության կանոնադրությունն ու գրանցման վկայականը, կազմակերպության փորձառությունը հավաստող նախկինում կատարած աշխատանքների ցանկը, և պայմանագիր շնորհելու դեպքում նաև համապատասխան բնագավառի շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության լիցենզիա)

8. Հետաքրքրված խորհրդատուների ուշադրությունը հրավիրվում է «Համաշխարհային բանկի փոխառուների կողմից ՎԶՄԲ-ի փոխառությունների և ՄԶԸ-ի վարկերի և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և վարձում, հունվար 2011, և վերանայված հուլիս 2014թ.» ուղեցույց 1.9 կետին, որտեղ մասնավորապես նշվում է Համաշխարհային Բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

9. Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի վերոհիշյալ ուղեցույցի 3.7 կետում սահմանված «Կազմակերպության որակավորման վրա հիմնված ընտրություն» ընթացակարգին համաձայն:

10. Լրացուցիչ տեղեկություններ կարող են ձեռք բերվել ստորև նշված հասցեում, աշխատանքային օրերին, ժամը 10:00-ից մինչև 17:00:

11. Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն գրավոր ձևով ստորև ներկայացված հասցեով (առձեռն կամ էլ-փոստով) ոչ ուշ քան ***2022թ. փետրվարի 10-ը***:

ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
Գյուղատնտեսության ծրագրերի իրականացման վարչության ՀԳՌԿՄ2 Ծրագիր
Ազատ Թովմասյան, գնումների գլխավոր մասնագետ
ՀՀ, 0010 ք. Երևան, Մ. Մկրտչյան 5, 8 հարկ, 832 սենյակ
Հեռ.՝ 011-597-284
Էլ. հասցե՝ atovmasyan@agridf.am, kgalustyan@agridf.am
Վեբկայք՝ www.arspiu.am